ՏԴ/0306/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 նոյեմբերի 2024 թվական քՔ.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի սեպտեմբերի 16-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Վաչե Կարենի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 519-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 97-0016-23 (ՏԴ/0306/01/24) քրեական վարույթը:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 18-ին որոշում է կայացրել թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 18-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 15-ին որոշում է կայացրել թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 20-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 519-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 27229 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 12-րդ վաշտի 2-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, ՀՀ ՊՆ 27229 զորամասի հրամանատարի համապատասխան հրամանի համաձայն, 2023թ-ի օգոստոսի 31-ից 21 օր ժամանակով, որպես դիտորդ ընդգրկված լինելով մարտական հերթապահության նույն զորամասի պահպանության տեղամասում գտնվող թիվ 136՝ «Սամվել» կոչվող մարտական դիրքում, 19.09.2023թ-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, նույն մարտական դիրքի գետնափոսակի դռան դիմացի հատվածում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված՝ ոտնաթաթն անզգուշությամբ տրորելու հարցի շուրջ վիճաբանել է իր նկատմամբ պետ հանդիսացող, նույն մարտական դիրքում որպես դիրքի ավագի օգնական*

ծառայության նշանակված՝ նույն գումարտակի 12-րդ վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Արման Համլետի Գևորգյանի հետ, որի ընթացքում, չպահպանելով «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ, 13-րդ, 16-րդ, 65-րդ, 158-րդ և ՀՀ ՔՕԻ կարգապահական կանոնագրքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջները՝ կապված ներքին ծառայության պահանջները բարեխղճորեն կատարելու, զինվորական ընկերասիրությունը բարձր պահելու, համածառայողներից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը հարգելու, նրանց նկատմամբ կոպտություն, ծաղրուծանակ, կյանքի և առողջության նկատմամբ բռնություն թույլ չտալու, բարձր բարեկրթություն, զսպվածություն ցուցաբերելու, այլոց արժանապատվությունը հարգելու հետ, իր պարտականությունները կատարելու փոխարեն դրսևորել է զինվորական պատվի հասկացողության և զինծառայողների արժանապատվության հետ անհամատեղելի վարքագիծ՝ մարտական դիրքի զինաբուրգից վերցրել է նույն մարտական դիրքի ավագ, պայմանագրային զինծառայող, սերժանտ Մհեր Սերգոյի Երկնափեշյանին ամրակցված «ԱԿՄ» տեսակի ԱՄ 3291 գործարանային համարի ինքնաձիգը, որին ամրացված է եղել պահեստատուփ, բացել է զենքի ապահովիչը, լիցքավորել այն, որից հետո մենահատ մեկ կրակոց է արձակել դեպի օդ, ապա Ա.Գևորգյանի կողմից նրա վրա չկրակողի հասցեին հայհոյանք հնչեցնելուց հետո, վերջինիս առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ ինքնաձիգի փողն ուղղել է Ա.Գևորգյանի ոտքի ուղղությամբ և մեկ մենահատ կրակոց արձակել՝ զենքի գործադրմամբ վերջինիս պատճառելով աջ սրունք-թաթային հոդի շրջանի հրազենային գնդակային միջանցիկ վնասվածք՝ միջային պճեղի կոտրվածքով հրազենային մարմնական վնասվածքի ձևով, որն էլ առաջացրել է առողջության ծանր վնաս՝ առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս քան մեկ երրորդի կայուն կորստով: (…)»[1]:

6. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով մեղադրյալ Վ.Մինասյանի պաշտպաններ Վ.Գևորգյանի և

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 12-13:

Վ.Հովհաննիսյանի՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդությունը, 2024 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործով վարույթին օժանդակող անձանցից՝ վկա Հայկ Ռոբերտի Ազատյանը, վկա Գոռ Ռուբենի Սողոմոնյանը, վկա Սերժ Ալբերտի Խոջումյանը, վկա Արսեն Արայի Քալանթարյանը բնակվում են Դատարանի սպասարկման տարածքից դուրս՝ Երևան քաղաքում:*

Երևան քաղաքում են բնակվում նաև վարույթի մասնավոր մասնակիցներ՝ պաշտպանները՝ Վահան Հովհաննիսյանը, Վահան Գևորգյանը և Դավիթ Բաղդասարյանը: Ավելին՝ Երևան քաղաքում է բնակվում նաև դատակոչված փորձագետ Կարեն Գոգայի Աբրահամյանը: Տուժող Արման Գևորգյանը բնակվում է Արագածոտնի մարզի Վարդենուտ բնակավայրում:

Քրեական գործով վարույթին օժանդակող անձանցից վկա Հակոբ Մարտինի Այվազյանը բնակվում է Արմավիրի մարզի Արմավիր, իսկ Ավետիք Արմանի Գրիգորյանը՝ Արարատի մարզի Աբովյան համայնքում, Ռազմիկ Հովհաննեսի Բաղդասարյանը՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

Նման պայմաններում՝ ստացվում է, որ վարույթին օժանդակող անձանցից և վարույթի մասնավոր մասնակիցներից ընդհանուրը 14 անձանցից 8-ը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչն էլ կազմում է մեծամասնություն, իսկ տուժող Արման Համլետի Գևոգյանը, ում բնակության հասցեն է հանդիսանում՝ Արագածոտնի մարզ, Վարդենուտ բնակավայրը, չի առարկել սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելուն, ավելին՝ դատալսումների ընթացքում նշել է, որ, ըստ էության, իրեն առավել մատչելի կլինի, որ սույն քրեական գործը քննվի Երևան քաղաքի դատական տարածքում և տվել է իր համաձայնությունը վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ:

Այսինքն՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անհրաժեշտ երկու պայմանները միաժամանակ առկա են:

Ամփոփելով վերոնշվածը՝ Դատարանը գտնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը պետք է փոփոխել և վարույթն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, ավելին՝ սույն դեպքում տարածքային ընդդատության փոփոխումը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահերից: (…)»[2]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախ և առաջ պետք է արձանագրել, որ թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթում ներգրավված է թվով 15 մասնավոր մասնակից, իսկ վարույթին ներգրավված անձանց վերաբերյալ տեղեկանքից երևում է, որ միայն 7 անձի վերաբերյալ նշված հասցեներն են գտնվում Երևան քաղաքում, ինչը չի կազմում վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը:*

Այնուհետև, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթով առկա է մեկ մեղադրյալ, որը հաշվառված է և մինչև անազատության մեջ գտնվելը փաստացի բնակվել է Սյունիքի մարզի Գորիս քաղաքում: Թեև այս պահի դրությամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված կալանավորումը, սակայն չի բացառվում, որ վարույթի քննության ընթացքում նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխվի, և նրա նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվի տնային կալանք կամ այլ՝ առավել մեղմ խափանման միջոց, ինչն էապես խոչընդոտ կստեղծի մեղադրյալի ներկայությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ընթացող դատական նիստերին ապահովելու համար:

Անդրադառնալով վկաների հարցին՝ պետք է փաստել հետևյալը.

Դատակոչում ներառված են թվով 10 վկա, որոնցից միայն 4 են հաշվառված Երևան քաղաքում, ընդ որում՝ այդ վկաների՝ Հայկ Ազատյանի, Գոռ Սողոմոնյանի, Սերժ Խոջումյանի, Արսեն Քալանթարանի հարցաքննությունների արձանագրություններից երևում է, որ նրանք ծառայում են թիվ ՀՀ ՊՆ 27229

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 82-86:

զորամասում, որը գտնվում է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում: Մյուս 6 վկան, այդ թվում տուժողը, նույնպես ծառայում կամ աշխատում է թիվ ՀՀ ՊՆ 27229 զորամասում, որը գտնվում է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում:

Ստացվում է մի իրավիճակ, որ եթե գործի քննությունն իրականացվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, ապա Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում գտնվող ՀՀ ՊՆ թիվ 27229 զորամասում ծառայություն իրականացնող վերոհիշյալ 4 վկաները, և թիվ ՀՀ ՊՆ 27229 զորամասում ծառայող կամ աշխատող մյուս վկաները և տուժողը պետք է դատական նիստերի օրերին Նոյեմբերյան քաղաքից ներկայացվեն Երևան քաղաք:

Ինչ վերաբերում է պաշտպաններին, ապա նրանք մեղադրյալի պաշտպանություն ստանձնելուց քաջատեղյակ էին, որ գործի քննությունը պետք է իրականացվի ենթադրյալ հանցավոր արարքի կատարման տարածքում՝ Տավուշի մարզում և դրանով հանդերձ ստանձնել են մեղադրյալի շահերի պաշտպանությունը: Սակայն առաջին իսկ դատական նիստին մեղադրյալի պաշտպանները, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումը, միջնորդել են փոխել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը: Դատարանի գնահատմամբ նման դեպքերը կարող են հանգեցնել քրեական վարույթների արհեստական ընդդատության փոփոխմանը, մինչդեռ ընդդատության կանոնը ենթադրում է կայունություն և կանխատեսելիություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է փաստել, որ սույն վարույթի 15 մասնակիցներից, միայն մեղադրյալի 3 պաշտպաններն են բնակվում Երևան քաղաքում, Երևան քաղաքում հաշվառված 4 վկաները և վարույթ ներգրավված մյուս 8 վկաները ծառայում են Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում գտնվող ՀՀ ՊՆ 27229 զորամասում: Հետևաբար այն դիրքորոշումը, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատության փոփոխման անհրաժեշտ պայմանները, հիմնավոր չէ: Ուստի սույն գործի քննությունը պետք է իրականացվի Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: (…)»[3]*:*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 29-32:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալ Վ.Մինասյանը նախնական դատալսումների ընթացքում իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի[7]:

- Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ տասնչորս անձանցից ութը, բնակվում են Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ տուժողն իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ փաստելով, որ քրեական վարույթին ներգրավված անձանց վերաբերյալ տեղեկանքից երևում է, որ վարույթին ներգրավված է տասնհինգ անձ, որոնցից միայն յոթն են բնակվում Երևան քաղաքում, ինչը վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնություն չի կազմում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է նաև, որ սույն վարույթի մասնակիցներից միայն մեղադրյալի երեք պաշտպաններն են բնակվում Երևան քաղաքում, իսկ Երևան քաղաքում հաշվառված չորս վկաները և վարույթին ներգրավված մյուս ութ վկաները ծառայում են Տավուշի մարզում գտնվող զորամասում: Արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու բացառիկ հիմքը սույն դեպքում բացակայում է[9]:

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, դատական նիստի արձանագրություն, թերթ 80:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Վ.Մինասյանը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր, պաշտպաններ Վ.Գևորգյանի, Դ.Բաղդասարյանի և Վ.Հովհաննիսյանի, վկաներ՝ Հ.Ազատյանի, Գ.Սողոմոնյանի և Ա.Քալանթարյանի բնակության վայրն է Երևան քաղաքը, տուժող Ա.Գևորգյանի բնակության վայրն է Արագածոտնի մարզը[10], վկաներ՝ Մ.Երկնափեշյանի, Ռ.Շաղբաթյանի և Վ.Քոյանի բնակության վայրն է Տավուշի մարզը: Վկա Ռ.Բաղդասարյանի բնակության վայրը թեև նշված է Շիրակի մարզը, Ս.Խոջումյանի բնակության վայրը՝ Երևան քաղաքը, Ա.Գրիգորյանի բնակության վայրը՝ Արարատի մարզը, իսկ Հ.Այվազյանի բնակության վայրը՝ Արմավիրի մարզը, սակայն, ըստ վարույթի նյութերի, վերջիններս ներկայում զինվորական ծառայություն են իրականացնում Տավուշի մարզում[11]: Այսինքն, սույն վարույթին ներգրավված են տասնհինգ մասնավոր մասնակից և վկա, որոնցից միայն վեցն են բնակվում Երևան քաղաքում: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 356-357, հատոր 5 թերթեր 10-12:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 145-150, 132-138, հատոր 2 թերթեր 122-128, 35-40:

16. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում նշել նաև, որ եթե անգամ փորձագետ Կ.Աբրահամյանը դիտարկվի որպես վարույթի մասնակից, ապա վերը նշված պայմանը դարձյալ չի ապահովվի, քանի որ այդ դեպքում որպես վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների ընդհանուր թիվ պետք է հիմք ընդունվեր 16-ը:

17. Անդրադառնալով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությանը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահից, հարկ է արձանագրել, որ նշվածը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու ինքնավար հիմք չէ և կարող է հաշվի առնվել, եթե պահպանված են քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու՝ օրենքով ամրագրված նախապայմանները:

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՏԴ/0306/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ